



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 դեկտեմբերի 2019 թվականի N 159-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի հուլիսի 29-ի N257-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 9-ին ներկայացված N 19 արձանագրությունը

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով 63 /վաթսուներեք/ քաղաքացիների հատկացնել միանվագ դրամական օգնություն 6 975 000 /վեց միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ

10.12.2019

Հ.ԶՈԲԱՆՅԱՆ

X

2019թ. դեկտեմբերի 9
ք.Իջևան